ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 մարտի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

42
(2708)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԻ՛ ՓՈՐՁԵՔ ԳՐԱՔՆԵԼ ՄԵՔ

ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը երկարաշունչ մեջբերումներով մի գրություն է երեկ հասցեագրել «Ժողովուրդ» թերթի խմբագրություն եւ «նախազգուշացում հայտարարել» Քնար Մանուկյանին: Բանն այն է, որ Մանուկյանը մի հրապարակում էր արել, թե ինչպես են ԱԺ շենքի պահպանությունն իրականացնող աշխատակիցները հավաքվել ԱԺ դահլիճի դռան մոտ, երբ լսել են պատգամավորների գոռգոռոցները, որպեսզի դահլիճ մտնեն, երբ նախագահողը հրահանգի:

Աշխատակազմի ղեկավարը գրել է, թե այս հրապարակումով ՔՆար Մանուկյանը խախտել է ՀՀ ԱԺ 2017 թ. դեկտեմբերի 27-ի, ԱԺ խորհրդի 2019 թվականի, ԱԺ նախագահի որոշումները: Ի պատասխան ԱԺ աշխատակազմի նորաթուխ ղեկավարին՝ ընդգծում ենք, որ երեկ «Ժողովուրդ» թերթի խմբագրություն հասցեագրված գրությամբ Դավիթ Առաքելյանը խախտել է ՀՀ ԱԺ-ում լրագրողների հավատարմագրման կարգի 23-րդ կետը, այն է՝ «23. Ազգային ժողովը եւ Աշխատակազմը՝ 1) որեւէ ձեւով կամ եղանակով չեն կարող գրաքննություն իրականացնել լրագրողի մասնագիտական գործունեության նկատմամբ. 2) հավատարմագրված բոլոր լրագրողների համար ապահովում են ոչ խտրական պայմաններ. 3) չեն կարող խոչընդոտել լրագրողի օրինական գործունեությանը»:

ՀՀ աշխատակազմի ղեկավարն իր գործունեությամբ փորձել է գրաքննել «Ժողովուրդ» օրաթերթի ներկայացուցչին, քանի որ, նախ, Քնար Մանուկյանին զանգահարել են լրատվական ծառայությունից եւ պահանջել ջնջել հրապարակված նյութը եւ ստանալով մերժում՝ ուղարկել են նախազգուշական մի գրություն: Դավիթ Առաքելյանը որեւէ իրավունքով չի կարող ԱԺ-ում հավատարմագրված լրագրողին արգելել լուսաբանելու ԱԺ-ում տեղի ունեցող զարգացումները, գրաքննել լրագրողին, ցուցաբերել խտրական մոտեցում: Կհիշեք՝ ԱԺ աշխատակազմը կամ լրատվական ծառայությունը անվտանգության աշխատակիցների մասնագիտական գործունեության արգելվող լուսաբանման մասով նախկինում ակտիվությամբ աչքի չի ընկել: Երբ ԱԺ դահլիճում անվտանգության աշխատակիցները կին պատգամավորի նկատմամբ բռնություն էին գործադրում, քաշքշում էին տղամարդ պատգամավորներին, ու բոլոր տեսանյութերը կան, որեւէ լրատվամիջոց կամ լրագրող նկատողություն չի ստացել ԱԺ աշխատակազմի կողմից: «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը հորդորում է ԱԺ աշխատակազմին օրինազանցությամբ եւ պաշտոնեական դիրքի չարաշահմամբ աչքի չընկնել եւ չփորձել գրաքննել «Ժողովուրդ» օրաթերթին: Չի հաջողվել, չի հաջողվի եւ չի հաջողվելու: Մենք իրադարձությունները լուսաբանում ենք օբյեկտիվորեն:

Հ.Գ. Հիշեցնենք, որ Freedom House միջազգային իրավապաշտպան հեղինակավոր կազմակերպությունն իր զեկույցում ընդգծում էր այն, որ Ազգային ժողովում լրագրողի տեղաշարժը սահմանափակվում է, եւ դա համարվել է հետընթաց:

Այսօր Արցախի խորհրդարանը լիագումար նիստում կքննարկի Արայիկ Հարությունյանի նախաձեռնած Սահմանադրական բարեփոխումների նախագիծը: Առաջարկվող փոփոխությունների համաձայն՝ ֆորսմաժորային իրավիճակներում, երբ, օրինակ, նախագահը անսպասելի հրաժարական է տալիս, մահանում է կամ, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, այլեւս ի վիճակի չէ պաշտնավարել, նախագահ ընտրելու լիազորություն կտրվի խորհրդարանին: Սա, ընդգծենք, չի վերաբերում նախագահի հերթական ընտրություններին. այս դեպքում նախագահին Սահմանադրությամբ նախատեսված կարգով ընտրելու է ժողովուրդը: Արցախի ԱԺ պետահիրավական հանձնաժողովը երեկ դրական եզրակացություն տվեց նախագծին: Այսպիսով, Սահմանադրական բարեփոխումների նախագիծն այսօր արդեն երկրորդ ընթերցմամբ կքննարկվի, քվեարկություն, սակայն, այսօր չի լինի: Քննարկման ժամանակ պատգամավորները իրենց առաջարկները կներկայացնեն՝նախագծի հետ կապված, որից հետո այն կգնա Գերագույն դատարան: Դատարանը 10-օրից մինչեւ 6-ամսյա ժամկետում իր եզրակացությունը կներկայացնի՝նախագծի հետ կապված, որից հետո նորից այն կվերադառնա խորհրդարան եւ արդեն քվեարկության կդրվի: Նշենք, որ Սահմանադրական փոփոխությունների նախագիծը կարող է ընդունվել պատգամավորների ընդհանուր թվի 2/3-ով (22 պատգամավոր):

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝Երեւան քաղաքի դատարանը մի քանի անգամ ծանուցում է ուղարկել ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Սիսակ Գաբրիելյանին ներկայանալու իր գործով դատական նիստերին, սակայն իշխանական պատգամավորը չի ներկայացել եւ պատճառաբանել է, թե ծանուցում չի ստացել: Դատական համակարգը որոշել է Գաբրիելյանին ծանուցում ուղարկել ՀՀ Ազգային ժողովի միջոցով, որպեսզի նա ներկայանա դատարան: Իսկ ի՞նչ գործով պետք է Սիսակ Գաբրիելյանը ներկայանա Երեւան քաղաքի դատարան: Բանն այն է, որ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, Արագածոտնի նախկին մարզպետ Աշոտ Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, մասնակցելով 2020 թվականի դեկտեմբերի 28-ին՝ժամը 09:00-ից մինչեւ 11:30-ն ընկած ժամանակահատվածում Երեւան քաղաքի Դեմիրճյան փողոցում՝ՀՀ Ազգային ժողովի մոտ, Ազգային ժողովի բնականոն աշխատանքի խոչընդոտման նպատակով անցկացվող հավաքին, խոչընդոտել է աշխատանքի վայր ժամանող ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի երթեւեկը, հնչեցրել անպարկեշտ արտահայտություններ: «Պատգամավորը փորձել է խուսափել կոնֆլիկտից եւ առաջարկել է բացել ճանապարհը, սակայն հավաքի մասնակիցներից չպարզված անձը Գաբրիելյանին վիճաբանության մեջ ներքաշելու նպատակով հարվածել է նրա ավտոմեքենային: Վիճաբանություն է սկսվել պատգամավորի ու հավաքի մասնակիցների միջեւ, որի ընթացքում Աշոտ Սիմոնյանը հնչեցրել է սեռական բնույթի հայհոյանքներ, հավկիթներով հարվածել Գաբրիելյանին, քաշքշել եւ եւ այլն»: Այս գործը դատարանում է, եւ այն քննում է ԲԴԽ անդամ Սերգեյ Չիչոյանի եղբորորդին՝ Ժորա Չիչոյանը, որի ծանուցումները եւս պատգամավոր Գաբրիելյանը անտեսում է: Երեկ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցեց Սիսակ Գաբրիելյանի հետ՝հասկանալու համար, թե նա, ի վերջո, ներկայանալու է արդյոք դատարան, կատարելու է դատարանի որոշումը, թե էլի «ծանուցում չի ստացել»: «Չգիտեմ՝ ինչ գործի մասին եք ասում: Ծանուցում ստացել եմ, բայց այս անգամ էլ չեմ գնա, քանի որ երկրում չեմ լինելու. Միացյալ Նահանգներ եմ մեկնում»:

ՀՀ պետեկամուտների կոմիտեի նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանը երեկ դատարան չի ներկայացել: Դատավորը բացել է նիստը եւ փակել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Խաչատրյանի առողջական վիճակը վատ է. դա է պատճառը, որ դատարան չի ներկայացել: Ինչպես հայտնի է, հունվարի 18-ին Գագիկ Խաչատրյանին դատարանը թույլատրել էր մեկնել արտերկիր բուժման նպատակով: Նա 2023 թվականի հունվարի 20-ից մինչեւ փետրվարի 10-ը բացակայել էր երկրից, եւ չնայած մեղադրող դատախազը դեմ էր՝ մտավախություն հայտնելով, որ Խաչատրյանը Հայաստան չի վերադառնա, այնուամենայնիվ, Խաչատրյանը գնաց եւ հետ եկավ: Ինչպես հայտնի է, Գագիկ Խաչատրյանին մեղադրանք է առաջադրված միլիոնավոր դոլարների չարաշահման, կաշառք վերցնելու եւ փողերի լվացման համար: Խոսքը 41 միլիոն դոլարի մասին է: Գլխավոր դատախազությունը Խաչատրյանին մեղադրում է նաեւ ապօրինի ճանապարհով հարստանալու համար: Գագիկ Խաչատրյանից եւ նրան փոխկապակցված 20-ից ավելի անձանցից բռնագանձման ենթակա է 210 անշարժ գույք, որից 60-ը՝Երեւան քաղաքում: Բացի այդ, դատախազությունը պահանջում է բռնագանձել 14 տրանսպորտային միջոց, մասնակցություն իրավաբանական անձ հանդիսացող 33 կազմակերպությունում, նաեւ ավելի քան 40 միլիարդ դրամ:

ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ

ՀԱՐՑԸ ԿԱՐՈՂ Է ԼՈՒԾՎԵԼ ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Արդեն 100 օր է՝ Արցախի Հանրապետությունը Լաչինի միջանցքի ազելափակման հետեւանքով շրջափակման մեջ է: 2022 թ. դեկտեմբերի 12-ից է Ադրբեջանը փակ պահում Արցախը Հայաստանի եւ արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը:

120 հազար խաղաղ բնակչությունը, այդ թվում՝ 30 հազար երեխա, զրկվել է սննդամթերքի եւ կենսական նշանակության այլ ապրանքների բավարար մատակարարումից: Ստեփանակերտում շարունակում են անհնալ մնալ հերթական վիրահատությունները, իսկ ծայրահեղ ծանր հիվանդները Ստեփանակերտից Երեւան են տեղափոխվում Կարմիր խաչի աջակցությամբ ու միջնորդությամբ: Արցախում առաջին անհրաժեշտության սնունդը, միրգն ու բանջարեղենն էլ դեռ կտրոններով են: Այս ընթացքում, բացի հումանիտար խնդիրներից, իրավիճակը չանցավ առանց արյան: Ադրբեջանցիների կրակոցներից մարտի 5-ին երեք ոստիկան սպանվեց, որոնք բոլորն էլ անձնագրային ու վիզաների վարչության աշխատակիցներ էին: Ստեփանակերտից պարբերաբար հաղորդում են նաեւ գյուղատնտեսական աշխատանքներ կատարող արցախցիների ուղղությամբ կրակոցների մասին:

«Ժողովուրդ» օրաթերթն այս առնչությամբ մի քանի հարց է ուղղել ԵՄ-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար, Եվրախորհրդարանի անդամ Լուկաս Ֆուրլասին:

-Պարոն Ֆուրլաս, Ադրբեջանն արդեն 100 օր է՝ փակ է պահում Արցախը Հայաստանին եւ արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը: Ի՞նչ կարծիք ունեք ստեղծված իրավիճակի մասին:

-Բոլորս էլ հասկանում ենք, որ իրավիճակը ողբերգական է եւ վերաբերում է կանանց, երեխաներին, հիվանդներին, քրոնիկ հիվանդներին եւ տարեցներին: Սա, անկասկած, հումանիտար ճգնաժամ է, որին պետք է անհապաղ լուծում տալ վատթարագույնից խուսափելու համար: Ցավոք, մենք ունենք Լեռնային Ղարաբաղի բնակչության շրջափակում եւ տարածաշրջան մատակարարման գծի խափանում:

-Ադրբեջանը շարունակում է իր քայլերը: Այս պայմաններում հնարավոր համարո՞ւմ եք Ադրբեջանի հետ հաշտության պայմանագիր կնքելը:

-Հերթական անգամ ականատես ենք լինում Բաքվի կողմից սադրանքի եւ ագրեսիայի. մենք դատապարտում ենք ոչ թե ադրբեջանական ժողովրդին, այլ նրա ավտորիտար բռնապետությանը, որը հումանիտար ճգնաժամ է առաջացնում հայ ժողովրդի համար: Բաքվի այս ավտորիտար իշխանությանը ակնհայտորեն աջակցում է Թուրքիան: Տարածաշրջանում հումանիտար ճգնաժամը հնարավոր է կասեցնել միայն մեկ ճանապարհով. Ադրբեջանը պետք է անհապաղ անցնի երթեւեկության եւ էներգամատակարարման ամբողջական վերականգնմանը: Միայն այսկերպ կխուսափենք տարածաշրջանում հումանիտար իրավիճակի հետագա վատթարացումից: Խաղաղ եւ արդյունավետ լուծում գտնելը իդեալական սցենար է այն սկզբունքների եւ արժեքների համար, որոնց պաշտպանում է Եվրամիությունը: Անձամբ ես տարածաշրջանում տիրող իրավիճակի մասին տեղեկացված լինելուն պես քայլեր ձեռնարկեցի՝ գրավոր հարց ներկայացնելով Եվրահանձնաժողովին: Հարցի միջոցով խնդրել եմ հանձնաժողովի անհապաղ միջամտությունը՝ երթեւեկության եւ էներգամատակարարման լիարժեք վերականգնման նպատակով: Անհրաժեշտ է, որ բոլորն իրենց ապահով զգան, եւ բոլոր ներգրավվածների միջեւ երկխոսություն լինի, որպեսզի ապահովվի խաղաղություն եւ կայունություն ողջ տարածաշրջանում:

-ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսեց Հայաստանի եւ Արցախի սահմաններին առկա էսկալացիայի վտանգի մասին: Այս պայմաններում ի՞նչ կարող է անել հայկական կողմը:

-Լաչինի միջանցքի շարունակվող շրջափակումը վտանգում է հազարավոր մարդկանց կյանքը՝ անջատված Լեռնային Ղարաբաղի տարածքում: Հայաստանի կառավարությունը պետք է շարունակի կոչ անել Ադրբեջանի իշխանություններին անհապաղ ապաշրջափակել երթուղին եւ վերջ դնել ծավալվող հումանիտար ճգնաժամին: Ադրբեջանի պարտավորությունն է ապահովել, որ Լեռնային Ղարաբաղի բնակչությանը չարգելեն սննդամթերքի եւ այլ առաջին անհրաժեշտության ապրանքների եւ դեղերի հասանելիությունը: Մեզ առավելապես մտահոգում է խաղաղ բնակչությունը, որը, ցավոք, ստիպված է գոյատեւել սարսափի եւ անորոշության պայմաններում: Ինչպես արդեն նշեցի, խնդիրը կարող է լուծվել միայն մեկ ճանապարհով. Ադրբեջանը պետք է անհապաղ անցնի երթեւեկության եւ էներգամատակարարման ամբողջական վերականգնմանը:

ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ

ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԿՐԿԻՆ ՔՐՈՒՑԵԼ Է

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը երեկ եւ այսօր հեռախոսազրույց է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ Նիկոլ Փաշինյանը եւ Էնթոնի Բլինքենը մտքեր են փոխանակել Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման, տարածաշրջանում հաղորդակցության ուղիների բացման հեռանկարների շուրջ:

Հեռախոսազրույցի ընթացքում վարչապետ Փաշինյանը նաեւ մտահոգություն է հայտնել վերջին շրջանում Ադրբեջանի կողմից աճող ագրեսիվ հռետորաբանության կապակցությամբ:

Հեռախոսազրույցի մասին իր թվիթերյան էջում հայտնել է նաեւ Էնթոնի Բլինքենը՝ նշելով, որ «Հարավային Կովկասում խաղաղության միակ ճանապարհը դիվանագիտությունն է»:

Իսկ, ահա, Ադրբեջանի նախագահը Միացյալ Նահանգների պետքարտուղարի հետ հեռախոսազրույցում դարձյալ ընդգծել է Լաչինի միջանցքում անցակետ տեղադրելու անհրաժեշտությունը՝ պատճառաբանելով, թե հայկական կողմը շարունակում է ռազմական փոխադրումները Ղարաբաղ:

Իլհամ Ալիեւն ասել է, որ պատրաստ է մոտ ապագայում ստորագրել խաղաղության համաձայնագիրը, որի տեքստը վերջին առաջարկություններով եւ փոփոխություններով արդեն ներկայացվել է հայկական կողմին:

Պետդեպարտամենտը հաղորդում է, որ Բլինքենն է զանգահարել Ալիեւին:

Ըստ հաղորդագրության՝ պետքարտուղարն առաջարկել է ԱՄՆ-ի շարունակական աջակցությունը Հայաստանի հետ երկկողմ խաղաղ քննարկումներին նպաստելու գործում, ընդգծել, որ չկա ռազմական լուծում, եւ կարեւորել Լաչինի միջանցքի վերաբացումը:

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը երեկ երեկոյան դարձյալ պնդել էր, թե օգտագործելով այլընտրանքային գրունտային ճանապարհները՝ Հայաստանից դեպի Ղարաբաղ ռազմական բեռնափոխադրումները շարունակվում են, այդ նպատակով օգտագործվում են նաեւ քաղաքացիական մեքենաները:

Նյութերը՝ ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԷԻՆ

Մինչ երեկ ՀՀ ԱԺ-ում քննարկում էին ՍԴ դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցը, եւ ընդամենը 30 պատգամավոր կողմ եղավ, որ Սաֆարյանի լիազորությունները դադարեցվեն, ՍԴ-ում դատավորները այլ գործով են զբաղված եղել: Նրանք պատրաստվել են ուրբաթ օրը կայանալիք նիստին: Իսկ ի՞նչ նիստի մասին է խոսքը: Ինչպես հայտնի է, ՀՀ կառավարությունն անցյալ տարեվերջին դիմել էր ՍԴ ու խնդրել պարզել, թե 1998 թվականին ստորագրված, բայց այդպես էլ չվավերացված Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը հակասություն ունի արդյոք Հայաստանի Սահմանադրության հետ, թե ոչ: Բանն այն է, որ միջազգային պայմանագրերը, որոնք ենթակա են վավերացման Ազգային ժողովի կողմից, Հայաստանում պարտադիր սահմանադրական վերահսկողություն պիտի անցնեն: Դա նշանակում է, որ կառավարությունը դիմում է այդ պայմանագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության ստուգման հարցով Սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանը որոշում է՝ համապատասխանում են արդյոք ստանձնած պարտավորությունները Սահմանադրությանը, թե ոչ: Ասել է թե՝ ՍԴ-Ն խառն է եղել՝ այս գործով նիստին պատրաստվելով, սակայն ավելի ուշ ծանոթացել են ԱԺ քննարկման արդյունքին ու հասկացել, որ ԱԺ-ն գնդակը գցեց իրենց դաշտ, ու հիմա հերթը իրենց որոշելունն է՝ կարգապահական վարույթ կիարուցեն, թե ոչ: Չի բացառվում՝ դատավորները հավաքվեն ու որոշում կայացնեն՝ ինչ պետք է անել՝ ներել օրինախախտ դատավոր Սաֆարյանին, թե պատժել, որ մյուսներն էլ զգաստանան: Հավելենք, որ Սեդա Սաֆարյանը ինքնախոստովանել է, որ անթույլատրելի արարք է թույլ տվել, որը հավաստող փաստաթուղթը «Ժողովուրդ» օրաթերթը հրապարակել էր:

⇨ էջ 3

ՄԻՊ ԹԵԿՆԱԾՈՒ

Ինչպես արդեն հայտնի է, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը Մարդու իրավունքների պաշտպանի թափուր պաշտոնում կառաջադրի գլխավոր դատախազի տեղակալ Մնահիտ Մանասյանի թեկնածությունը: Իսկ ի՞նչ է պատրաստվում անել խորհրդարանական ընդդիմությունը: «Միասին» այլընտրանքային հասարակական-քաղաքական շարժումը մարտի 17-ին նամակագրությամբ դիմել էր խորհրդարանական բոլոր, այդ թվում՝ ընդդիմադիր խմբակցություններին՝ առաջարկելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում առաջադրել հասարակական գործիչ, Սահմանադրական դատարանի աշխատակազմի նախկին ղեկավար Էդգար Ղազարյանի թեկնածությունը: «Ժողովուրդ» օրաթերթը դիմել է «Հայաստան» ու «Պատիվ ունեմ» խմբակցություններին՝ պարզելու՝ ինչ որոշում ունեն ՄԻՊ թեկնածու առաջադրելու մասով: Հետաքրքրվեցինք նաեւ՝ քննարկել են արդյոք Էդգար Ղազարյանի թեկնածությունը, հնարավոր է՝ նրան առաջադրեն՝ որպես միասնական թեկնածու: «Եւ առաջին, եւ երկրորդ հարցի մասով կարող եմ արձանագրել, որ այս պահին քննարկումները շարունակվում են, սակայն որոշում դեռ կայացված չէ»,- մեր հարցին ի պատասխան՝ ասաց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ազնեսա Խամոյանը: «Պատիվ ունեմ» խմբակցությունում եւս ՄԻՊ թեկնածուի մասով քննարկումներ կան: «Երկու հարցերն էլ քննարկվում են, բայց դեռ որոշում չկա»,- ասաց ֆրակցիայի ղեկավար Հայկ Մամիջանյանը: Հիշեցնենք, որ ՄԻՊ պաշտոնը թափուր է գրեթե երեք ամիս: Ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ պաշտոնը թափուր մնալուց հետո՝ եռամսյա ժամկետում, նոր ՄԻՊ պետք է ընտրվի: Մարդու իրավունքների պաշտպանին խորհրդարանն ընտրում է փակ գաղտնի քվեարկությամբ: Եթե նույնիսկ ընդդիմությունը դեմ լինի գլխավոր դատախազի տեղակալ Մանասյանի թեկնածությանը, իշխող խմբակցության ձայները բավարար կլինեն իրենց թեկնածուին ընտրելու համար:

ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ՝ ՍԱՀՄԱՆԻՆ

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում շփման գծի ողջ երկայնքով նկատվում է ադրբեջանական զինուժի, ծանր տեխնիկայի տեղաշարժ. սահմանամերձ բնակավայրերի բնակիչների համար է անգամ այն տեսանելի: Այս մասին դեռ մեկ շաբաթ առաջ ահազանգեց ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը: Պատգամավորը նաեւ գրություններ էր ուղարկել միջազգային բոլոր գործընկերներին:

«Ինքս ամեն օր կապի մեջ եմ սահմանամերձ գյուղի բնակիչների, զինվորականների հետ, որոնք ահազանգում են այն, ինչ տեսնում են, եւ այն շարժը, որ տեսել էին, ինձ ահազանգեցին: Ինքս անհրաժեշտ համարեցի այդ ահազանգի մասին դիմել իմ միջազգային գործընկերներին, որպեսզի հնարավորինս հնարավորություն ունենանք կանխարգելելու հնարավոր էսկալացիան: Հասկանում ենք՝ եթե թշնամին զինտեխնիկա է կուտակում, դա չի արվում սիրողական մակարդակի համար, այլ որեւէ գործողության համար է արվում:

Ահազանգերը ստացել եմ Գեղարքունիքից, Տավուշից եւ Արցախից: Երբ ասում եմ՝ Գեղարքունիք, նկատի ունեմ այդ ամբողջ սահմանը՝ Գեղարքունիքից մինչեւ Վայոց ձոր»,- ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում տեղեկացրել էր Թագուհի Թովմասյանը:

Երեկ արդեն ադրբեջանական տելեգրամյան ալիքներն են տեսանյութեր հրապարակել դեպի Հայաստանի եւ Արցախի սահման զինտեխնիկայի տեղաշարժով: Ըստ տարածվող տեսանյութերի՝ մեծ քանակությամբ հաուբիցներ եւ ծանր հրետանի են տեղափոխվում սահման:

ԱԶԳԱԿԱՆԸ՝ ՊԱՇՏՈՆԻՆ

Գյումրու ավագանին մարտի 15-ի նիստի ժամանակ 21 կողմ, 4 դեմ եւ 3 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ փոխքաղաքապետ ընտրեց Վահագն Մկրտչյանին: Վերջինս քաղաքական անցյալ չունի, մասնագիտությամբ ատամնաբույժ է: Նա ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի ազգականն է:

ArmLur.am-ը Գյումրու նախկին փոխքաղաքապետ Դավիթ Առուշանյանից, որն այժմ ՔՊ խմբակցության պատգամավոր է, հետաքրքրվեց՝ ինչպես է վերաբերվում Մկրտչյանի նշանակմանը, արդյոք միայն վարչապետի տիկնոջ ազգական լինելն է նպաստել, որ հենց նա ընտրվի փոխքաղաքապետ. «Հայաստանը փոքր երկիր է. որ այսպես գնա, բոլորս էլ մեկս մեկիս բարեկամ ենք դուրս գալու: Այդ հանգամանքը որեւէ նշանակություն չի ունեցել»,-այսպես արձագանքեց պատգամավորը:

ՉԱՆՑԱՎ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՉԻ ԴԻՄԻ ՍԴ

Ազգային ժողովը չի դիմի Սահմանադրական դատարան ՍԴ դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցով. Սաֆարյանին վերաբերող «Հայաստան» խմբակցության որոշման նախագիծը բավարար ձայներ չհավաքեց. իշխանությունները չմասնակցեցին քվեարկությանը:

Անցած տարի իշխանական խմբակցության ձայներով Սահմանադրական դատարանի դատավոր ընտրված Սաֆարյանը, ըստ ընդդիմության եւ մի խումբ փաստաբանների, զբաղվել է բարձր դատարանի դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի գործունեությամբ՝ ձեռնարկատիրությամբ: Այս հարցն ի հայտ եկավ, երբ փետրվարի սկզբին որոշ լրատվամիջոցներ գրեցին, թե Սաֆարյանը դատավորի լիազորությունները ստանձնելուց հետո փաստաբանական դիմում է ներկայացրել Վերաքննիչ դատարան:

Փաստաբանները տարբեր ապացույցներ են ներկայացրել, եւ, նրանց համոզմամբ, դրանք ապացուցում են, որ Սահմանադրական դատարանի (ՍԴ) նորընտիր դատավոր Սեդա Սաֆարյանը պետք է պաշտոնանկ արվի: Ըստ այդ տվյալների՝ Սահմանադրական դատարանի դատավոր դառնալուց հետո՝ ավելի քան մեկ ամիս, Սաֆարյանը պետռեգիստրում ունեցել է անհատ ձեռներեցի կարգավիճակ, ինչն անհամատեղելի է դատավորի գործունեության հետ:

«Սա հենց այն քաղվածքն է՝ ստացված պետական ռեգիստրից, որն ունի ընդհանուր բազային տեղեկատվություն որպես անհատ ձեռնարկատեր Սեդա Սաֆարյան Սերյոժայի տվյալների մասին, որով նա իրականացրել է իր փաստաբանական հատուցելի գործունեությունը օրենքի համապատասխան լինելու համար: Օրինակ՝ հարկ վճարելու, հաշվառվելու, պետական մարմինների հետ հարաբերվելու համար արդեն որպես ոչ թե փաստաբան, այլ որպես ձեռնարկատեր, որպես շահույթ հետապնդող անձ», - ներկայացրել էր փաստաբան Սոս Հակոբյանը:

Սահմանադրականի նորընտիր դատավորը քննադատության թիրախում հայտնվեց շաբաթներ առաջ, երբ համացանցում հայտնվեց դեկտեմբերի 28-ով թվագրված վերաքննիչ մի բողոք՝ հենց նրա՝ Սեդա Սաֆարյանի ստորագրությամբ: Այդ ժամանակ Սաֆարյանն արդեն ստանձնել էր Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները, ինչից հետո, ըստ օրենքի, իրավունք չուներ զբաղվելու փաստաբանությամբ:

Ինքը՝ Սաֆարյանը, չի հերքում, որ այդ դիմումն իսկական է, ստորագրությունն էլ՝ իրենը: Պատճառաբանում է, թե այդ օրը ընդամենը խմբագրել եւ նորից է ներկայացրել միջնորդությունը, որը գրել էր փաստաբան եղած ժամանակ:

«Դեկտեմբերի 5-ին բերված բողոքը հետ է վերադարձվել՝ պատճառաբանությամբ, որ պակասում է ինչ-որ փաստաթուղթ. դա դրվել է, հետ է ուղարկվել. դա նոր բողոք չի եղել, դեկտեմբերի 5-ի բողոք է», - նշեց Սաֆարյանը:

Ընդդիմախոսները հակադարձում են՝ անկախ պատճառաբանություններից՝ բարձրագույն ատյանի դատավորը պարտավոր է խստագույնս հետեւել օրենքի տառին: Նրանց համոզմամբ՝ կան բոլոր հիմքերը, որ Ազգային ժողովը դիմի բարձր դատարան՝ պահանջելով դադարեցնել դատավորի գործունեությունը: Արսեն Բաբայանը պնդում է՝ եթե դատավորը զբաղվեր քաղաքացու շահերը դատարանում ներկայացնելով միայն՝ առանց ձեռնարկատիրության, ապա հարցը կարող էր փակվել միայն նկատողությամբ: Սա, սակայն, այդ դեպքը չէ: «Սահմանադրական դատարանի մասին օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգապահական կանոնի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է հանդես չգալ որպես ներկայացուցիչ կամ չտրամադրել խորհրդատվություն, այդ թվում՝ անհատույց հիմունքներով», - ասաց Բաբայանը:

Սահմանադրական դատարանը, սակայն, արդեն մեկ ամիս է՝ այս փաստերին որեւէ կերպ չի արձագանքել: Բարձրագույն ատյանից չեն մանրամասնում՝ պատրաստվում են արդյոք քննել նորընտիր դատավորի հասցեին հնչող մեղադրանքները կամ նրա դեմ կարգապահական վարույթ նախաձեռնել: Առայժմ լուռ է նաեւ խորհրդարանը: Փաստաբանները, սակայն, պատրաստվում են հաջորդ շաբաթ այս փաստերն ուղարկել Ազգային ժողով, որն էլ ընտրել է Սաֆարյանին ՍԴ-ի դատավոր: Հիմա եթե հավաքվի 65 կողմ ձայն, խորհրդարանը կարող է դիմել Սահմանադրական դատարան նույն դատավորի պաշտոնանկության հարցը քննարկելու համար:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՉԵՆ ՄԱՄՆԱԿՑԵԼ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ

Երեկ խորհրդարանում տեղի ունեցավ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու համար Սահմանադրական դատարան դիմելու հարցի քվեարկությունը:

Նախագծի քվեարկությանը մասնակցել է 30 պատգամավոր, նրանցից 30-ն էլ մասնակցել եւ կողմ են քվեարկել նախագծին:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունից քվեարկությանը չեն մասնակցել պատգամավորներ Արթուր Խաչատրյանը, Արմեն Ռուստամյանը, Իրինա Գասպարյանն ու Արմեն Գեւորգյանը, իսկ «Պատիվ ունեմ» խմբակցությունից քվեարկությանը չի մասնակցել Թագուհի Թովմասյանը:

10 ՕՐՈՎ ԿՄԵԿՆԵՆ ԱՄՆ

Ազգային ժողովի նախագահի որոշմամբ՝ ՔՊ խմբակցության պատգամավորներ Սիսակ Գաբրիելյանն ու Վիլեն Գաբրիելյանը, «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Լիլիթ Գալստյանը եւ Ջեմֆիրա Միրզոեվան մարտի 27-ից ապրիլի 7-ը կգործուղվեն Լինքոլն (Ամերիկայի Միացյալ Նահանգներ):

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետության ԱԺ պատվիրակությունն ԱՄՆ-ում կմասնակցի «Օրենսդիր մարմնի դերը ԱՄՆ-ում» խորագրով «Բաց աշխարհ» ծրագրին: Պատգամավորների գործուղման հետ կապված օրապահիկի վճարումը կկատարվի Հայաստանի Հանրապետության պետբյուջեի հաշվին, իսկ ճանապարհածախսի եւ գիշերավարձի վճարումը կկատարի հրավիրող կողմը:

ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել է Անվտանգության խորհրդի գրասենյակ կառույցի 2022 թ. գործունեության հաշվետվությունը քննարկելու նպատակով: Խորհրդակցությանը մասնակցել են փոխվարչապետեր Մհեր Գրիգորյանը եւ Տիգրան Խաչատրյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, պետական վերահսկողական ծառայության ղեկավար Ռոմանոս Պետրոսյանը, ԱԽ ղեկավար կազմը, պաշտոնատար այլ անձինք:

Վարչապետին զեկուցվել է Անվտանգության խորհրդի գրասենյակի կողմից 2022 թ. կատարված աշխատանքների վերաբերյալ: Քննարկվել են ընթացիկ եւ առաջիկա միջոցառումները:

ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

Ավարտվել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու եւ ներգրավելու դեպքի նախաքննությունը՝ խմբավորման 4 անդամների մասով:

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչության աշխատակիցների կողմից իրականացված քննչական եւ վարութային մեծածավալ գործողությունների, ինչպես նաեւ ՀՀ ԱԱԾ, ՀՀ դատախազության եւ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ «օրենքով գողի» քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Է.Ջ.-ի կողմից կատարված հստակ դերաբաշխման համաձայն՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամներ Ա.Ն.-ն, Կ.Ղ.-ն, Վ.Մ.- եւ Ա. Մ-ն 2021թ. դեկտեմբերի 15-ից 27-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԱՆ տարբեր քրեակատարողական հիմնարկների դատապարտյալների համար կազմակերպված, այսպես ասած, «գրեֆի» շրջանակներում տարբեր անձանցից ստացել են մոտ 1.500 տուփ ծխախոտ, 300 տուփ թեյ եւ շուրջ 1.500.000 ՀՀ դրամ կանխիկ գումար: Է.Ջ-ի ցուցումով Ա.Ն.-ն դրանք բաժանել է քրեակատարողական հիմնարկներում, հավաքագրված գումարից, այսպես կոչված, «գրեֆ» ուղարկել 350.000 ՀՀ դրամը, իսկ մնացած գումարը ծախսել իր սեփական կարիքների համար:

Բացի այդ, 2021թ. նոյեմբերին Ստեփանավան քաղաքի բնակիչը գումարային հարցի շուրջ վիճաբանություն է ունեցել իր նախկին մտերիմի հետ: Վերջինս իր շահերը պաշտպանելու համար դիմել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամ Ա.Ն.-ին, որը, ներկայանալով որպես «գողական տղա», փորձել է հարցին լուծում տալ: Այն բանից հետո, երբ Ստեփանավանի բնակիչն ասել է, որ ինքը Ա.Ն.-ի հեղինակությունը չի ճանաչում, Ա.Ն-ն, Կ.Ղ.-ն, Վ.Մ.-ն, Ա.Մ.-ն եւ այլ անձինք հանդիպել են նրան, ծեծի ենթարկել հնչեցրած տեսակետի համար, որից հետո Է.Ջ-ն լուծել է վեճը:

Բացի այդ, մի քանի քաղաքացիներ տարբեր չափերի պարտքով գումարի վերադարձի խնդրանքով դիմել են քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամ Ա.Ն.-ին եւ Կ.Ղ.-ին: Վերջիններս, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոններով շարժվելով, կազմակերպել են նշված գումարները վերադարձնելու գործընթացը, որոնց մի մասը, որոշ դեպքերում՝ կեսը, յուրացվել է վերջիններիս կողմից: Բացի գումարների հետ վերադարձի կազմակերպումից, Ա.Ն.-ն իրականացրել է նաեւ տարբեր անձանց միջեւ ծագած վիճահարույց հարցերի պարզաբանումներ՝հետեւելով, որ վերջիններս պահպանեն իրենց հասկացությամբ ճիշտ ապրելակերպի կանոնները:

2022թ. փետրվարի 7-ին Ստեփանավան քաղաքի կամրջի սկզբնամասում կենցաղային հարցի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ նույն քաղաքի բնակիչը դանակով երկու անգամ հարվածել է վիճաբանության մասնակցին: Այնուհետեւ Ա.Ն.-ն եւ Կ.Ղ.-ն, վիճաբանող կողմերին լսելուց եւ քննարկումներ կատարելուց հետո հանգել են եզրակացության, որ Ստեփանավանի վերոնշյալ բնակիչը սխալ է: Պատժելու նպատակով վերջինիս կանչել են նույն քաղաքում գտնվող նախկին հացի արտադրամասի տարածք, որտեղ, որպես պատիժ, ապտակել են նրան:

Քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման վերոնշյալ 4 անդամների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, ինչը բավարարվել է, եւ անձանց ներկայացվել է մեղադրանք: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Հիշյալ 4 մեղադրյալների մասով նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին: Քննիչի միջնորդության հիման վրա՝ հանցախմբի պարագլուխ՝ «օրենքով գողի» քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Է.Ջ.-ի նկատմամբ եւս հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը, եւ հայտարարվել՝հետախուզում:

Է.Ջ.-ն հայտնաբերվել է Իսպանիայի Թագավորությունում եւ ձերբակալվել: Ձեռնարկվում են համապատասխան միջոցներ ՀՀ նրա տեղափոխումը կազմակերպելու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐՈՐԴԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Մարտի լույս 21-ի գիշերը պարեկային ծառայության Երեւանի գնդի 4-րդ գումարտակի ոստիկանները ստուգման նպատակով կանգնեցրել են «Պորշ» մակնիշի մի մեքենա: Պարեկները վարորդի սթափությունը ստուգելու նպատակով պահանջել են նրա փաստաթղթերը: 43-ամյա տղամարդը հրաժարվել է եւ մոտենալով պարեկային ավտոմեքենային՝ գրպանից հանել է քսանհազարանոց 3 թղթադրամ ու դրել առջեւի նստելատեղին: Պարեկները նրան ձերբակալել ու տեղափոխել են ոստիկանության Արաբկիրի բաժին: Ստուգվել է վարորդի սթափությունը: Նա ոչ սթափ վիճակում էր: Դեպքի հանգամանքները նախաքննությամբ պարզվում են: Պարեկային ծառայության ներդրման առաջնահերթ նպատակներից էր կոռուպցիոն ռիսկերի բացառումը: Պարեկներն իրենց գործողություններով բազմիցս հավաստել են, որ հավատարիմ են այդ սկզբունքին: Վարորդներին հորդորում ենք խստորեն պահպանել ճանապարհային երթեւեկության կանոնները եւ չդրսեւորել հակաօրինական վարքագիծ: Բոլոր ապօրինություններին տրվելու է համարժեք իրավական գնահատական:

ՀԱՐՁԱԿՈՒՄ՝ ՏԱՃԱՐԻ ՎՐԱ

Հայ եւ հույն ուղղափառ եկեղեցիների համատեղ հսկողության ներքո գտնվող Գեթսեմանիի Սուրբ Աստվածածին տաճարը հարձակման է ենթարկվել: Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանը հայտարարություն է տարածել՝դատապարտելով տաճարի վրա կատարված հարձակումը:

«Թեեւ Սուրբ Աստվածածին տաճարի վրա այս հարձակումն առաջինն էր այս տարվա սկզբից ի վեր, սակայն քրիստոնեական մյուս սրբավայրերն անզգամ հարձակվողների կողմից մշտապես ենթարկվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական ճնշումների: Եթե քրիստոնեական սրբավայրերի վրա կատարված նախորդ հարձակումներն արագորեն դատապարտվեին տեղական իշխանությունների կողմից, եւ հանցագործները պատժվեին օրենքի ողջ խստությամբ, քրիստոնեական համայնքների, եկեղեցիների եւ վանքերի վրա նոր հարձակումներ չէին լինի: Կրոնական անհանդուրժողականությունը եւ ատելությամբ լցված ոճրագործությունները իրենց բոլոր դրսեւորումներով երբեք չեն ապահովելու խաղաղ համակեցության պայմաններ: Հատկապես, երբ այսօր իշխանությունների կողմից անվերահսկելի են այդ հարձակումները, դա ավելի է խթանելու ատելությամբ լցված հանցագործությունները եւ անհանդուրժողականությունը: Այսպիսի գործողություններն ու դրանց անպատժելիությունը ստեղծում են անապահով պայմաններ քրիստոնեական համայնքների համար եւ անվստահության սերմեր են ցանում հավատացյալների, զբոսաշրջիկների եւ բնակիչների միջեւ տեղական իշխանությունների հանդեպ: Հետեւաբար, Իսրայելի կառավարությանը եւ ոստիկանության կոչ ենք անում, որպեսզի լուրջ միջոցներ ձեռնարկեն՝ կանխելու այսօրինակ հարձակումները եւ պաշտպանելու ինչպես քրիստոնեական սրբավայրերը, այնպես էլ նրանց ամենօրյա սպասավորներին հետագա ոտնձգություններից եւ հարձակումներից»,- ասված է Պատրիարքարանի տարածած հայտարարության մեջ:

ԼՈՒՐԵՐ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԱՎՏՈՎԹԱՐ

Մարտի 21-ին՝ ժամը 23:15-ին, Շիրակի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Գյումրի քաղաքի Հայուհու հրապարակում տեղի է ունեցել ավտովթար, կա տուժած, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Պարզվել է, որ բախվել են Opel Astra G եւ Mercedes-Benz C180 մակնիշների ավտոմեքենաները:

Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենաները, փակել գազի բալոնների փականները, Opel Astra G մակնիշի ավտոմեքենայից դուրս բերել քաղաքացիներից մեկի դին եւ երկու տուժածի: Տուժածներից մեկը հոսպիտալացման ճանապարհին մահացել է, իսկ մյուս տուժածը հոսպիտալացվել է Գյումրու ԲԿ, որտեղ նրա առողջական վիճակը գնահատվել է ծայրահեղ ծանր:

ՅԱՆԿԱՑԵԼ Է ՀԱՆԴԻՊԵԼ

ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը ցանկացել է «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում՝ «ԿԳԲ-ի պադվալում» հանդիպել Արցախի ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանին, սակայն ստացել է մերժում: Գեղամ Մանուկյանը ArmLur.am-ի հետ զրույցում հաստատեց մեր ունեցած տեղեկությունը: Հիշեցնենք, որ, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, ՀՀ քննչական կոմիտեն 4-րդ անգամ է երկարացրել Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի կալանքը: 2022թ.-ի սեպտեմբերի 1-ին դատախազությունը հայտարարեց, որ Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար, Արցախի նախագահի խորհրդական Միքայել Արզումանյանին մեղադրանք է առաջադրվել 2020 թվականի արցախյան պատերազմի ընթացքում ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող «Արեգա» բարձունքը եւ հարակից մարտական դիրքերն ազատագրած անձնակազմին «նահանջ» հրաման տալու համար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հերթական ապատեղեկատվությունն է տարածել այն մասին, թե, իբր, հայկական կողմը՝ռուս խաղաղապահների ուղեկցությամբ, զորք եւ զինամթերք է տեղափոխել Ստեփանակերտ-Ղաբալիշեն-Լիսագոր անտառային ճանապարհով. այս մասին հայտնում է Արցախի ՆԳՆ ոստիկանությունը: «Իրականում խաղաղապահ զորակազմի ուղեկցությամբ այդ ճանապարհով տեղի է ունենում միայն քաղաքացիական անձանց եւ հումանիտար բեռների տեղափոխություն Արցախի բնակավայրերի միջեւ: Հիշեցնենք, որ Շուշիի շրջանի որոշ գյուղերի հետ մայրաքաղաքի բնականոն հաղորդակցությունն ընդհատվել է 2022 թվականի դեկտեմբերի 12-ից՝Ադրբեջանի կողմից Ստեփանակերտ-Գորիս միջպետական մայրուղին արգելափակելու պատճառով: Իսկ ռուս խաղաղապահները կատարել են իրենց գործառույթը՝ամրագրված 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ: Հաշվի առնելով մարտի 5-ի դիվերսիոն հարձակումը Արցախի ոստիկանների վրա եւ առաջացած լրացուցիչ անվտանգային ռիսկերը՝ռուսական կողմն ապահովել է քաղաքացիական անձանց ու բեռների անվտանգ տեղաշարժը»,- ասված է հաղորդագրության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մարտի 21-ից 22-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 48 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՄԵՂԱԴԲՈՒՄ Է ԵՐԱԽՏԱՄՈՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Նախկինում հայտնել եմ, որ շուրջ երկու տարի ծագումով Աֆրիկայից, Կոտ դԻվուարից Յաո Սիլվիոն Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի տղաներին ֆուտբոլ խաղալ է սովորեցնում: Սիլվիոն իր սաներից յուրաքանչյուրից ամսական 3 հազարական դրամ վարձ է վերցնում, հավաքված գումարը ծախսվում է Թեղուտ գյուղում աֆրիկացի մարզչի վարձակալած բնակարանի վարձավճարի եւ կոմունալ ծախսերը հոգալու համար: Սիլվիոն Թեղուտ է տեղափոխվել Դիլիջան քաղաքից, նա՝ որպես ֆուտբոլիստ, հանդես է եկել Երեւանի «Ալաշկերտ» ֆուտբոլային թիմի, Վանաձորի «Լոռի»-ի կազմում: Սիլվիոյի մեծ ցանկությունն է Թեղուտ գյուղում ունենալ ֆուտբոլի մեծ, իսկական խաղադաշտ, քանի որ այն խաղադաշտը, որտեղ աֆրիկացի մարզիչը պարապում է թվով շուրջ քսան թեղուտցի տղաների հետ, փոքր է, չի համապատասխանում ֆուտբոլի խաղադաշտի չափանիշներին: Ֆեյսբուքում գումարների հանգանակություն է սկսվել աֆրիկացի մարզչի մանկապատանեկան թիմին մարզական գույքով օգնելու համար: Սիլվիոյի մասին իմ հրապարակումից հետո լրագրողիս զանգահարեց Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի Տավուշի մարզի ներկայացուցիչ Արմեն Խաչատրյանը եւ հայտնեց, որ ՀՖՖ-ն Թեղուտ գյուղում գործող, Սիլվիոյի ղեկավարած ֆուտբոլի մանկական թիմին օգնել է մարզումների համար անհրաժեշտ մարզական պարագաներով, Սիլվիոյին մարզահագուստ է նվիրել: ՀՖՖ ներկայացուցիչն ասաց, որ Սիլվիոն իր թիմի մարզումներն անցկացնում է արհեստական խոտածածկով Թեղուտի խաղադաշտում, որը կառուցել է ՀՖՖ-ն, առաջնությանը մասնակցելու համար Թեղուտի խաղադաշտը փոքր է, իրենք են հոգացել, որ Թեղուտի 12 տարեկանների թիմը խաղա Իջեւան քաղաքի թիվ 3 դպրոցի, Գետահովիտ եւ Աչաջուր գյուղերի խաղադաշտերում: Արմեն Խաչատրյանին ասացի, որ ՀՖՖ-ն ՖԻՖԱ-ից, ՈՒԵՖԱ-ից, Հայաստանի պետական բյուջեից մեծ գումարներ է ստանում, ֆեդերացիան ինչու՞ Յաո Սիլվիոյին մանկական թիմի մարզիչ աշխատելու համար չի վճարում: Ա. Խաչատրյանը հայտնեց, որ Տավուշի մարզում բազում մարզիչներ կան, որոնք տարիներ շարունակ ֆուտբոլ են պարապում երեխաների հետ, սակայն ՀՖՖ-ից աշխատավարձ չեն ստանում. Սիլվիոն չէր կարող բացառություն լինել եւ ՀՖՖ-ից աշխատավարձ ստանալ: ՀՖՖ-ի ներկայացուցիչը աֆրիկացի մարզչին մեղադրեց երախտամոռության համար: Թեղուտ գյուղի բնակիչները հայտնեցին, որ Յաո Սիլվիոն բարի եւ ազնիվ մարդ է, նա մեծ գործ է կատարում, որի արդյունքները կերեւան տարիներ հետո:

ԱՆՈՐՈՇ ՊԱՏԱՍԽԱՆ

Տավուշի մարզպետարան «Ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել, թե 2020թ.-ի աշնանը Արցախում տեղի ունեցած պատերազմում Տավուշի մարզի քանի բնակիչ է զոհվել, քանիսն է անհետ կորած, քանիսը՝ գերի: Տավուշի մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Զոհված եւ գտնվելու վայրն անհայտ համարվող զինվորականների թիվը կարող է տրամադրել միայն ՀՀ պաշտպանության նախարարությունը»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՈՐՈՇ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՎՐԱՑԵՐԵՆ Է ԴԱՍԱՎԱՆԴՎՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեին եւ նրան ներկայացրել վերջերս Վրաստան կատարած պաշտոնական այցի մանրամասները:

ԿԳՄՍ նախարարը շնորհավորել է դեսպանին նշանակման կապակցությամբ եւ արդյունավետ աշխատանք մաղթել՝ ի շահ հայ-վրացական բարեկամական կապերի զարգացման՝ համոզմունք հայտնելով, որ նա իր ներդրումը կունենա երկու երկրների միջեւ հարաբերությունների առավել ամրապնդման եւ խորացման գործում:

«Շատ արդյունավետ այց էր, որի շրջանակում հնարավորություն ունեցանք քննարկելու համագործակցության հեռանկարները ինչպես կրթության, գիտության, այնպես էլ մշակույթի ոլորտներում: Մի շարք նոր պայմանավորվածություններ ձեռք բերվեցին, եւ նոր հուշագրեր ստորագրվեցին, որոնք, վստահ եմ, նպաստելու են բոլոր ուղղություններով մեր համագործակցության ընդլայնմանն ու խորացմանը»:

ԿԳՄՍ նախարարը տեղեկացրել է, որ այժմ քննարկվում է մշակույթի օրեր կազմակերպելու ծրագիրը, որի շրջանակում մի շարք հետաքրքիր նախաձեռնություններ են նախատեսվում: Մասնավորապես, քննարկվում է Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական թատրոնի վերակառուցված շենքի բացման արարողությունը մշակույթի օրերի շրջանակում կազմակերպելու հնարավորությունը:

Դեսպան Գիորգի Շարվաշիձեն շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ ընդգծել՝ հայկական կողմի հետ համագործակցության ամրապնդումն ու զարգացումն իրենց համար մեծ կարեւորություն ունեն: Գիորգի Շարվաշիձեն հույս է հայտնել՝ իր գործունեությամբ կկարողանա նպաստել երկու երկրների երիտասարդների միջեւ ավելի սերտ կապերի ձեւավորմանը եւ փոխճանաչման մակարդակի բարձրացմանը:

Դեսպանը կարեւորել է մշակույթի օրերի անցկացումը՝ ընդգծելով, որ համագործակցության հեռանկարներ է տեսնում նաեւ բարձրագույն կրթության ոլորտում:

«Գիտեմ, որ կրթական բարեփոխումների ակտիվ փուլում եք եւ աշխատանքներ եք տանում նաեւ բուհերի միջազգայնացման ուղղությամբ: Սա շատ ողջունելի է, եւ կարծում եմ՝ ընդլայնում է այս ուղղությամբ համագործակցության հնարավորությունները»,- նշել է ՀՀ-ում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանը:

Ժաննա Անդրեասյանը, կարեւորելով երկու երկրների տարբեր ուսումնական հաստատությունների միջեւ համագործակցության խորացումը, տեղեկացրել է՝ Վրաստան կատարած այցի շրջանակում համագործակցության երկու հուշագրեր են կնքվել հայկական եւ վրացական երկու դպրոցների եւ երկու բուհերի միջեւ:

Կողմերն անդրադարձել են նաեւ տարածաշրջանային լեզուների ուսուցման ծրագրին եւ, այս համատեքստում, Հայաստանում վրացերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցմանը:

Ժաննա Անդրեասյանը նշել է, որ նախորդ տարվա սեպտեմբերից հայաստանյան մի քանի դպրոցներում վրացերեն է դասավանդվում, որը երկկողմ համագործակցության նոր հնարավորություններ եւ համատեղ ծրագրեր է ենթադրում: Անդրադառնալով երիտասարդների միջեւ կապերի ամրապնդմանը՝ ԿԳՄՍ նախարարը կարեւորել է երիտասարդական ֆորումների եւ ճամբարների անցկացումը:

Կողմերը քննարկել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր եւ պատրաստակամություն հայտնել զարգացնելու կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում համագործակցությունը:

ՀԱՅՑԱԳԻՄՈՒՄ

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔ

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ եւս երկու հայցադիմում ընդունվել է Հակակոռուպցիոն դատարանի վարույթ. տեղեկացնում են ՀՀ գլխավոր դատախազությունից:

Մեկ հայցադիմումով՝ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին Երեւան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի նախկին ղեկավար Ա.Հ.-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- Արաբկիր վարչական շրջանի Գուլակյան փողոցում գտնվող տունը, իսկ անհնարինության դեպքում՝ դրա միջին շուկայական արժեքը, որն ընդհանուր կազմում է ավելի քան 82 մլն դրամ,
- շուրջ 312 մլն դրամ՝ որպես օրինական եկամուտներով չհիմնավորվող եւ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամ:

Մյուս հայցադիմումով Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին «ԱԼՔՍ» ՍՊ ընկերության տնօրեն Ա.Ք.-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Տանձաղբյուրի փողոցի քոթեջը, իսկ անհնարինության դեպքում՝ միջին շուկայական արժեքը՝ 73 մլն 950 հազար դրամ,
- Երեւանի Նորք-Մարաշ վարչական շրջանի Ամառանոցային փողոցում գտնվող անշարժ գույքը, իսկ անհնարինության դեպքում՝ միջին շուկայական արժեքը՝ 90 մլն 950 հազար դրամ,
- Երեւանի Շենգավիթ վարչական շրջանի Արտաշիսյան փողոցում գտնվող անշարժ գույքը, իսկ անհնարինության դեպքում միջին շուկայական արժեքը՝ 10 մլն 900 հազար դրամ,
- Երեւանի Շենգավիթ վարչական շրջանի Արտաշիսյան փողոցում գտնվող մեկ այլ անշարժ գույքը, իսկ անհնարինության դեպքում միջին շուկայական արժեքը՝ 13 մլն 665 հազար դրամ,
- TOYOTA CAMRY 2.5 GAS մակնիշի տրանսպորտային միջոցը, իսկ անհնարինության դեպքում՝ միջին շուկայական արժեքը՝ 6 մլն 500 հազար դրամ,
- PORSCHE CAYENNE S 4.8 մակնիշի տրանսպորտային միջոցը,
- «ԱՔԼՍ» ՍՊ ընկերության 100 տոկոս մասնակցությունը,
- «ԵՎՐՈԹԵՔՆՈԼԱՅԹ» ՍՊ ընկերության 100 տոկոս մասնակցությունը,
- 61 մլն 650 հազար 164 դրամը՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ,
- 2 մլն 319 հազար 095 դրամի չափով գումարը, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի, կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 9 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 8-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից ներկայացված հետեւյալ լոտի գնման իրավունքի բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով.

- ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն համայնք, Ե. Չարենցի փողոց, 70/8 շենք, 75 հասցեում գտնվող 538,5 ք.մ. մակերեսով հասարակական տարածք (գրանցման օբյեկտը կառուցվող շինության նկատմամբ կառուցապատողի իրավունքներն են, ավարտվածության աստիճանը 50-80%) եւ 0.0926 հա մակերեսով (ընդհանուր բաժնային սեփականություն) հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 380000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 10.04.2023թ.-ին, ժ.12:00-ին, այնուհետեւ 11 աշխատանքային օր, նույն ժամին՝ դասական եղանակով: Դասական փուլերում չվաճառված գույքը սակարկվում է հոլանդական եղանակով՝ մեկնարկային գների իջեցումով յուրաքանչյուր հաջորդ փուլին, բայց ոչ պակաս Բանկի կողմից ներկայացված հատման գնից: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է Բանկի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների ացնկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՆՈՒՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ ԿԼՐԱՑՎԻ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի N 243-Ա հրամանով հաստատվել է նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի որակավորման տարակարգի շնորհման համար ծնողների կողմից լրացվող անանուն գնահատման հարցաթերթիկը:

Անանուն հարցաթերթիկները կազմված են բնութագրական հարցերից, որոնց միջոցով ծնողները գնահատում են մանկավարժական աշխատողին՝ բացահայտելով, թե նրանք որքանով են ճանաչում սաների կարիքները եւ որքան սերտ են համագործակցում ընտանիքների հետ եւ այլն:

Նշենք, որ նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողի շնորհման համար ծնողի կողմից լրացվող անանուն հարցաթերթիկը ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ. մարտի 23-ի 16-Ն հրամանով սահմանված 9 բնութագրիչներից մեկն է:

Ընդհանուր առմամբ սահմանված են հետեւյալ բնութագրիչները՝

1) զբաղեցրած պաշտոնին համապատասխան մասնագիտական բարձրագույն կրթությունը,

2) Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից երաշխավորված՝ նախադպրոցական կրթության բնագավառում ղեկավար կամ մանկավարժական աշխատողներին վերապատրաստող կազմակերպությունում որպես վերապատրաստող մասնագետ ներգրավված լինելը,

3) վերջին հինգ տարվա ընթացքում նախարարության կողմից երաշխավորված՝ նախադպրոցական կրթությանն առնչվող ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկի կամ ուսումնաօժանդակ նյութի հեղինակ կամ համահեղինակ լինելը,

4) վերջին երեք տարվա ընթացքում Կրթության տեսչական մարմնի ստուգումների կամ արտաքին գնահատման արդյունքում ցուցանիշներ ունենալը,

5) վերջին երեք տարվա ընթացքում «Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերից մեկում հաղթող ճանաչված լինելը,

6) սաների կարիքների ճանաչում, ընտանիքի հետ համագործակցություն՝ անանուն հարցաթերթիկների միջոցով ծնողների կողմից մանկավարժական աշխատողի գնահատման արդյունքները,

7) տարակարգի համար դիմելու նախորդ ամսվա ընթացքում կազմած ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը (ներառյալ պարապմունքների պլանները) (պարապմունքների պլանների պահանջը մեթոդիստի դեպքում կիրառելի չէ),

8) տարակարգի համար դիմելու նախորդ վեց ամսվա ընթացքում իր մոտ կատարված պարապմունքների լսումների եւ տարբեր ռեժիմային պահերի դիտումների արձանագրությունները, դիդակտիկական տարբեր նպատակներով իրականացված երկու պարապմունքի տեսագրություն,

9) ներառականությունն ու մասնակցայնությունն ապահովող կարողություններ՝ մշակված անհատական ուսուցման եւ զարգացման պլանի ներկայացում, կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների կրթության եւ զարգացման արդյունավետության մասին վկայող փաստեր՝ ԿԶԱՊԿ գնահատման արդյունքի փոփոխություն (առկայության դեպքում) եւ (կամ) սաների զարգացման եւ կրթության արդյունքի գնահատման ընթացքը հավաստող փաստաթղթեր՝ ըստ եռամսյակների կամ կիսամյակի:

Առաջին աստիճանի տարակարգ շնորհվում է վերը նշված բնութագրիչներից առնվազն 3-ն ապահովելու դեպքում, երկրորդ եւ երրորդ աստիճանի տարակարգ շնորհվում է համապատասխանաբար սահմանված բնութագրիչներից առնվազն 5-ը եւ առնվազն 7-ն ապահովելու դեպքում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐՈՎԻՆ ՏԵՐՆ Է ՏԱՐԵԼ, ԱՆՏԵՐԻՆ՝ ԳԵՂԸ

«Միացյալ Հայաստան» կուսակցության հիմնադիր-նախագահ Երվանդ Թարվերդյանը հայտարարություն է տարածել. «Օրեր առաջ ՀՀ եւ ՌԴ ԱԳ նախարարների համատեղ մամուլի ասուլիսում Սերգեյ Լավրովի խոսքում մի շարք մտահոգիչ դրույթներ կային: Մասնավորապես, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի անտեսումը ո՛չ մեր իշխանությունների, ո՛չ էլ դաշնակից երկրի վարչակազմի կողմից որեւէ արդարացում չունի:

Չէ՞ որ տասնամյակներ շարունակ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, որոնց շարքում նաեւ ՌԴ-ն է, հիմնվել են երեք հայտնի սկզբունքների, այդ թվում՝ ինքնորոշման իրավունքի վրա:

Ռուսաստանը հաճախ է խոսում Ղրիմի, Աբխազիայի, Հարավային Օսիայի ժողովուրդների ինքնորոշման իրավունքի անբեկանելիության մասին: Իր հերթին, հավաքական Արեւմուտքի համար ինքնորոշման իրավունքի հիմնարար օրինակը Կոսովոն է՝ ի հակադրություն Սերբիայի տարածքային ամբողջականության սկզբունքի:

Այդ դեպքում ինչո՞վ է Արցախի եւ արցախցիների իրավունքը զիջում վերոնշյալ էթնոքաղաքական հակամարտություններին: Ոչնչո՛վ. դեռ ավելին՝ Արցախում այսօր նոր ցեղասպանության վտանգը շատ ավելի ակնառու է, քան վերոբերյալ օջախներից որեւէ մեկում:

Ալիեւի վերջին սպառնալից հայտարարությունները զավթված Թալիշից (եթե ուզում ենք ապրել 29 հազար քառակուսի կիլոմետրի վրա, պետք է Արցախը ճանաչենք որպես Ադրբեջանի մաս) պիտի սթափեցնի աշխարհասփյուռք հայությանը եւ նախեւառաջ ՀՀ բնակչությանը: Արցախի օտարմամբ ադրբեջանական զավթիչների ախորժակը միայն մեծանալու է: Նրանք արդեն պաշտոնական հավակնություններ են ներկայացնում ՀՀ Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերի նկատմամբ:

Ընդ որում՝ սկզբնապես փորձելու են այսպես կոչված փախստականներին բերել-բնակեցնել ՀՀ հարավային մարզերում, ապա աստիճանաբար զավթելու են նորանոր հողակտորներ, գյուղեր, շեներ, համայնքներ ու քաղաքներ: Պետք է կասեցնել այս գահավեժ ընթացքը եւ ամեն կերպ նեցուկ լինել մեր պատվարը դարձած, ավելի քան 100 օր շրջափակման մեջ գտնվող արցախցի քույրերին ու եղբայրներին:

Եթե ընկնի Արցախը, չի լինի նաեւ Հայաստան»:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՆՆԱԽԱԴԵՊ ՊԱՅՄԱՆՆԵՐ

«ԳՈՅ» ԹԱՏՐՈՆԸ ՉԻ ՓԱԿՎՈՒՄ. ԽԶՄԱԼՅԱՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը մշակել է մի նախագիծ, ըստ որի՝ «Գոյ» թատրոնի վարչական հատվածը նախատեսվում է կրճատել, իսկ թատրոնի ստեղծագործական կազմը՝ «Գոյ» թատերախումբ անունով, կշարունակի գործունեություն ծավալել Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տանիքի ներքո: Նախարարությունը վստահեցնում է, որ այդ ղարագայում «Գոյ»-ը կարող է ընդլայնել իր հնարավորությունները:

Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական կենտրոն «Գոյ» թատրոնի անձնակազմը դեմ է նախագծին եւ օրեր առաջ դիմել է գործընկերներին, ընկերներին, հանդիսատեսին՝ նշելով, որ թատրոնն աջակցության կարիք ունի:

ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Արա Խզմալյանի խոսքով՝ ամբողջ խնդիրը գալիս է այն մեծ դեմագոգիայից, որ այսօր հանրային քննարկումներում կա: «Ասվում է, որ «Գոյ» թատրոնը փակվում է, լուծարվում է: Եթե թատրոն ասելով՝ հասկանում ենք իրավակազմակերպական վիճակը՝ տնօրենը, հաշվապահը, պետական գնումների մասնագետը, իրավաբանը, այսինքն՝ վարչական հատվածը, ապա, այո՛, «Գոյ» թատրոնը փակվում է, իսկ եթե թատրոն ասելով՝ հասկանում ենք ստեղծագործական ծրագրերը, ստեղծագործական կազմն ու բովանդակությունը, ապա «Գոյ» թատրոնը ոչ միայն չի փակվում, այլեւ թատրոնի համար ստեղծվում են աննախադեպ բարենպաստ պայմաններ»,-հավաստիացնում է Խզմալյանը:

Ըստ նրա՝ թատրոնն ունի թերացումներ բովանդակային եւ ֆինանսական հաշվետվությունների մեջ, չունի ռեսուրսներ՝ լուսաձայնային տեխնիկա եւ այլն, թերանում է հյուրախաղային գործունեության մեջ: «Ես չեմ ցանկանում՝ մեր եւ մեր ենթակայությամբ գործող կառույցի միջեւ քննարկումները, որոնք անկեղծ մթնոլորտում են անցել, եւ կոլեկտիվի բոլոր անդամներն ընդունել են այն ամենը, ինչն ասել եմ, հանրայնացնել, չեմ ուզում՝ մեր զրույցը դառնա հանդիսատեսի քննարկման առարկա, չեմ ուզում վարկաբեկել մեր ենթակայությամբ գործող թատրոնը, բայց... Մենք թատրոնի ներկայացուցիչներին ասում ենք, որ Մայր թատրոնի տանիքի ներքո նրանք հնարավորություն են ունենում օգտվելու այդ մեծ կառույցի եկամուտներից, ֆինանսական, գույքային ու ստեղծագործական ներուժից»,- շեշտում է փոխնախարարը:

Նրա խոսքով՝ «Գոյ»-ն այսօր ունի մեկ բեմ, սակայն Մայր թատրոնին միանալով՝ կունենա Black Box հարթակն անհատույց շահագործելու հնարավորություն, կկարողանա աշխատել թատրոնի մեծ բեմում, կարող է թատրոնի ճմեռային այգում աշխատել: Խզմալյանը հիշեցնում է, որ «Գոյ»-ը փորձարարական թատրոն-լաբորատորիա է եւ իրավունք չունի կառչած մնալ միեւնույն տարածքից, քանի որ նույն տարածքում հնարավոր չէ մշտապես լինել փորձարարական:

Փոխնախարարն առաջարկում է Սունդուկյանի անվան թատրոնի սեփական եկամուտները, որոնք գեներացվել են, ուղղել «Գոյ»-ի դահլիճի բարեկարգմանը, լուսաձայնային տեխնիկայի վերազինմանը, հյուրախաղային գործունեության ընդլայնմանը, թե՛ Հայաստանից, թե՛ արտերկրից ռեժիսորներ հրավիրելուն, որոնք, ըստ Խզմալյանի, գիտեն, թե ինչ է ճշմարիտ փորձարարությունը: «Որեւէ մեկը տարածք վերցնելու, խումբը ցրելու նպատակ բացարձակապես չունի»,-շեշտում է նա:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԻ ԵՆ ՄՐՑԱՎԱՐՆԵՐԸ

Փետրվարի 2024թ. Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի առաջին մրցափուլի Հայաստան - Թուրքիա հանդիպումը կսպասարկի Իսպանիայի ֆուտբոլի ֆեդերացիան ներկայացնող մրցավարական խումբը. հաղորդում է ՈՒԵՖԱ-ի մամուլի ծառայությունը:

Գլխավոր մրցավարը կլինի Խոսե Մարիա Սանչեսը: Նրան կօգնեն Ռաուլ Կաբանիերոն եւ Ինյիգո Պրիետոն: Չորրորդ մրցավար է նշանակվել Մարիո Մելերո Լոպեսը:

Հայաստան - Թուրքիա հանդիպումը տեղի կունենա մարտի 25-ին Երեւանի Հանրապետական ստադիոնում եւ կմեկնարկի 21:00-ին:

ՑԱԾՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

«Բարսելոնան» ցանկանում է վերադարձնել աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի 35-ամյա հարձակվող Լիոնել Մեսիին, սակայն չի կարող վճարել բարձր աշխատավարձ:

Կատալոնական ակումբը Մեսիին կառաջարկի ցածր աշխատավարձ, բայց նաեւ երաշխավորված տոկոս ակումբի եկամուտից տիտղոսներ նվաճելու դեպքում:

Մեսին արգենտինական «Նյուելս Օլդ Բոյսից» 2000 թվականին էր տեղափոխվել «Բարսելոնա», որի կազմում հանդես էր գալիս մինչեւ 2021 թվականը:

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի հետ Մեսիի պայմանագիրը նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը:

ԿԱՐԻԵՐԱՆ ԱՎԱՐՏԵՑ

Գերմանիայի հավաքականի, Մադրիդի «Ռեալի», Լոնդոնի «Արսենալի» նախկին խաղացող թուրք կիսապաշտպան Մեսութ Օզիլը սոցիալական ցանցերում արած գրառումով հայտարարեց ֆուտբոլիստի պրոֆեսիոնալ կարիերան ավարտելու մասին:

«Երկար մտածելուց հետո որոշեցի ավարտել կարիերաս: Բարեբախտություն եմ ունեցել գրեթե 17 տարի լինել ֆուտբոլիստ, սակայն վերջին մի քանի ամիսներին վնասվածքների պատճառով ծագած դժվարությունները ստիպեցին ընդունել, որ հեռանալու ժամանակն է:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր ակումբներիս՝ «Շալկեին», «Վերդերին», «Ռեալին», «Արսենալին», «Ֆեներբահչեին», «Իստանբուլ Բաշակշեհիրին»: Այժմ ավելի շատ ժամանակ կտրամադրեմ ընտանիքիս»,- գրել է 34-ամյա ֆուտբոլիստը:

Օզիլը Գերմանիայի հավաքականի կազմում դարձել է աշխարհի չեմպիոն, «Վերդերի» հետ՝ Գերմանիայի գավաթակիր, «Ռեալի» հետ՝Իսպանիայի գավաթակիր եւ սուպերգավաթակիր, «Արսենալի» հետ՝Անգլիայի գավաթակիր եւ սուպերգավաթակիր:

ԼՈՒՐԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է

Բրիտանահայ շոումեն Գեւ Օրկյանը չի դադարում աշխարհին պատմել այն փորձությունների մասին, որոնց միջով ամիսներ շարունակ անցնում են Արցախում ապրող 120 հազար անմեղ հայերը: Օրկյանը պարբերաբար հոլովակներ է ներկայացնում ինստագրամյան իր էջում՝ բարձրաձայնելով ադրբեջանցիների կողմից Արցախի շրջափակման մասին եւ քննադատելով աշխարհին անտարբերության համար: Այս անգամ հումորիստն անդրադարձել է Ադրբեջանի նախագահի սպառնալիքներին:

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Երգչուհի Սյուզաննա Մելքոնյանն իր երկրպագուների համար հարցուպատասխան է կազմակերպել «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում եւ պատասխանել նրանց հետաքրքրող հարցերին:

Հետեւորդներից մեկի այն հարցին՝ եթե հանդիպեր ինքն իրեն մանուկ հասակում, ինչ կասեր, երգչուհին պատասխանել է. «Ինձ չէի ասի, պապայիս կասեի, որ ինձ մենակ մի թող...»,- գրել է Սյուզաննան:

Հիշեցնենք, որ երգչուհի Սյուզաննա Մելքոնյանը 2021 թվականին հաղթել է ռուսական հայտնի «Ну -ка, все вместе!» նախագծում:

ԳԱՐՈՒՆԸ՝ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

Դերասանուհի Աննա Մանուչարյանը գարնանային այս տաք օրերը վայելում է Լեհաստանում:

Դերասանուհին «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում իր հետեւորդների համար հրապարակել է Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայից գեղեցիկ լուսանկարներ եւ կիսվել իր ջերմ տրամադրությամբ:

Նշենք, որ դերասանուհի Աննա Մանուչարյանը «Մանկական Եվրատեսիլ» 2021թ.-ի հաղթող Մալենայի մայրն է:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

● *Մարտի 24-ին Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑՓԱԹԵԹ

ՀԱՐՑ. Սոցիալական փաթեթից օգտվողը կարո՞ղ է փոխել սոցիալական փաթեթի հաշիվը:
Վահե Գալստյան (51 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ յուրաքանչյուր բյուջետային տարվա սոցիալական փաթեթի գումարների փոխանցման համար լրացվում է նոր դիմում:

Սոցփաթեթի հաշիվը կարելի է փոխել միայն նոր բյուջետային տարում՝նախքան սոցիալական փաթեթի ընթացիկ տարվա առաջին գումարի փոխանցումը: Այս դեպքում աշխատողը դիմումի հետ միասին ներկայացնում է նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք, ինչպես նաեւ սոցփաթեթի նախկին հաշիվը սպասարկող բանկից տեղեկանք՝ պարտավորություններ չունենալու վերաբերյալ:

Սոցփաթեթի հաշիվը փոխելու դեպքում աշխատողն իր հաշվի դրամական միջոցները սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկից սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկ փոխանցելու համար նախկին բանկ է ներկայացնում նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք:

Այդ տեղեկանքի հիման վրա՝ սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկն աշխատողի սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները փոխանցում է սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկի սոցփաթեթի հաշվին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները հնարավոր է կանխիկացնել կամ փոխանցել ցանկացած ուղղություններով միայն աշխատողի՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու եւ սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման ժամանակ (երբ դադարում է նրա՝ սոցիալական փաթեթ ստանալու իրավունքը, եւ նրա սոցփաթեթի հաշվին առնվազն երեք ամիս սոցիալական փաթեթի գումարների փոխանցումներ չեն կատարվել) կամ աշխատողի մահվան դեպքում ժառանգի կողմից սոցփաթեթի հաշվում առկա միջոցներն օրենքին համապատասխան ժառանգաբար նրան անցնելու դեպքում:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՐՑ. Որտեղի՞ց պետք է ձեռք բերել դեղերի դրոշմավորման համար անհրաժեշտ դրոշմապիտակներ:
Մելինե Խաչատրյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ ըստ «Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 9.3-ի 1-ին կետի՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրող եւ ԵՏՄ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծող անձինք մինչեւ այդ ապրանքների օտարումը դրոշմապիտակները ձեռք են բերում իրենց հաշվառման հարկային տեսչությունից:

Հայաստանի Հանրապետության տարածք պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող անձինք (բացառությամբ ԵՏՄ երկրներից ներմուծողների) դրոշմապիտակները ձեռք են բերում իրենց հաշվառման մաքսատնից մինչեւ այդ ապրանքների օտարումը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ըստ «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքի հոդված 9.1-ի 1-ին կետի՝ եթե նշված հոդվածով այլ բան սահմանված չէ, դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման ենթակա են Հայաստանի Հանրապետության տարածքում օտարման ենթակա, օրենքի 9.2-րդ հոդվածում նշված ապրանքները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Աբովյան 22 հասցեի՝ տուֆից շենքի վրա ամրակներով գովազդային վահանակ են տեղադրում, ավերում են ամենահին շենքերից մեկի պատը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.03.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: